ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » նոյեմբերի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ, 70-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-395-16.10.2018-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը և «Պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1560 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-395-16.10.2018-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացված նախագծով առաջարկվում է ավելացնել կուսակցությունների ֆինանսավորման համար ՀՀ պետական բյուջեով նախատեսվող միջոցների չափը:

Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ օրենքի փոփոխությունը թույլ կտա կուսակցությունների ֆինանսավորման ավելացմամբ ձեռնամուխ լինել Հայաստանի Հանրապետությունում կուսակցությունների դերի բարձրացմանն ուղղված նոր բարեփոխումների իրականացմանը:

Անդրադառնալով նախագծով առաջարկվող փոփոխությանը՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ բացակայում են համապատասխան վերլուծությունները և միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչն էական նշանակություն և կարևորություն ունի ներկայացված առաջարկության հիմնավորվածությունը լիարժեք գնահատելու համար: Տեղին է նշել, որ օտարերկրյա պետությունները տարբեր մոտեցումներ ունեն այս հարցի շուրջ:

Միջազգային փորձի ուսումնասիրության առումով հարկ ենք համարում անդրադառնալ մի քանի երկրում կուսակցությունների ֆինանսավորման հետ կապված առկա իրավակարգավորումներին:

Մի շարք երկրների օրենսդրությամբ հատուկ նշվում է, որ կուսակցությունների գործունեության համար ֆինանսական միջոցները հատկացվում են պետական բյուջեից:

Գերմանիայում «Քաղաքական կուսակցությունների մասին» օրենքով սահմանված է, որ ամեն տարի կուսակցությունները ստանում են՝

- 0.83 եվրո՝ ցուցակի համար տրված յուրաքանչյուր ձայնի համար,

- 0.83 եվրո՝ միամանդատ համայնքում ստացած յուրաքանչյուր ձայնի համար,

-0.45 եվրո՝ կուսակցությունների կողմից որպես ներդրում կամ նվիրատվություն ստացած յուրաքանչյուր եվրոյի համար, բայց ոչ ավելի, քան 3000 եվրո:

Լրացուցիչ 1 եվրո՝ ընտրություններին ստացած յուրաքանչյուր ձայնի համար (մինչև 4 մլն եվրո):

Ֆրանսիայում օրենսդրությամբ նախատեսված է, որ քաղաքական կուսակցությունների ֆինանսավորումը բաժանվում է երկու մասի՝ կախված Ազգային ժողովի ընտրությունների 1-ին փուլում հավաքած ձայների քանակից և ընտրություններում հաղթած՝

Պառլամենտի անդամների քանակից: Կուսակցությունների կողմից ստացած յուրաքանչյուր ձայնի համար վճարվում 1.63 եվրո:

Ռուսաստանի Դաշնությունում «Քաղաքական կուսակցությունների մասին» օրենքով կարգավորվում են քաղաքական կուսակցություններին հատկացվող ֆինանսական միջոցների հետ կապված հարաբերությունները, որոնց համաձայն՝ Դաշնային բյուջեով նախատեսված՝ կուսակցությունների ֆինանսավորման միջոցների ընդհանուր ծավալը չի կարող պակաս լինել քսան ռուբլուց՝ բազմապատկած Ռուսաստանի Դաշնության Պետական Դումայի կամ նախագահի մոտակա ընտրությունների ժամանակ ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների ընդհանուր թվով:

Բելառուսի Հանրապետությունում «Քաղաքական կուսակցությունների մասին» օրենքի համաձայն՝ արգելվում է քաղաքական կուսակցությունների ֆինանսավորումը հանրապետական և տեղական բյուջեներից: Պետական մարմինները և այլ պետական կազմակերպություններն իրավունք չունեն ֆինանսավորելու քաղաքական կուսակցությունները և միությունները:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ որոշ երկրներում քաղաքական կուսակցությունները ընտրություններին մասնակցելու և որոշակի թվով ձայներ հավաքելու պարագայում ֆինանսավորվում են պետության կողմից, իսկ որոշ երկրներում ընդհանրապես արգելված է կուսակցությունների պետական ֆինանսավորումը:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ նախագծի ընդունման դեպքում կառաջանա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տարեկան շուրջ 700.0 մլն դրամի լրացուցիչ միջոցների հատկացման անհրաժեշտություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագծով նախատեսված փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը նպատակահարմար չէ, և առաջարկում է գործող օրենքի քննարկվող հոդվածը թողնել անփոփոխ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է ավելացնել կուսակցությունների ֆինանսավորման համար ՀՀ պետական բյուջեով նախատեսվող միջոցների չափը:

ՀՀ օրենքի վերոնշված նախագիծն ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական բյուջեի մուտքերի և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի փոփոխմանը չի հանգեցնում, իսկ ՀՀ պետական բյուջեի ելքերի մասով կառաջացնի ՀՀ պետական բյուջեից տարեկան շուրջ 700.0 մլն դրամի լրացուցիչ միջոցների հատկացման անհրաժեշտություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 նոյեմբերի 2018 թվականի N 1560 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-395-16.10.2018-ՊԻՄԻ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 22
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-224-Ն սահմանադրական օրենքի Հոդված 26-ի 2-րդ կետում «0,04-ապատիկ» բառերը փոխարինել «0,3-ապատիկ» բառերով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ցանկացած ժողովրդավարական երկրում բազմակուսակցական կայուն համակարգը հանդիսանում է ժողովրդավարության պահպանման և հետագա զարգացման հիմնասյունը, իսկ Հայաստանի Հանրապետության պարագայում, որտեղ կուսակցությունները, պայմանավորված պատմական իրողություններով, ի վիճակի չեն եղել կայանալ և ձևավորվել վերջնական, դասական տեսքով, վերոնշյալ խնդիրը հանդիսանում է առավել կարևոր: Նշված իրավիճակի պատճառների մեջ կարևորագույն տեղ է գրավում կուսակցությունների ֆինանսավորումը, որը մասնակիորեն կատարվում է պետության կողմից, սակայն ոչ բավարար կերպով: Այն է՝ մշտապես կուսակցություններին հատկացվող գումարները չեն եղել շոշափելի և ծավալային առումով այնպիսին, որպեսզի կուսակցությունները չունենան ֆինանսավորման այլ աղբյուրներ գտնելու հետ կապված խնդիրներ և հրամայականներ: Ֆինանսավորման այլ աղբյուրները հանգեցրել են նրան, որ շատ հաճախ, կուսակցությունները դարձել են այս կամ այն տնտեսական շահի սպասարկողներ՝ զրկվելով իրենց առաջնային առաքելությունն իրականացնելու հնարավորությունից: Օրենքի նշված փոփոխությունը թույլ կտա, նախևառաջ, կուսակցությունների ֆինանսավորման ավելացմամբ ձեռնամուխ լինել Հայաստանի Հանրապետությունում կուսակցությունների դերի բարձրացմանն ուղղված նոր բարեփոխումների իրականացմանը: Նշված նախագիծը կարող է լինել առաջին քայլը՝ ամուր կուսակցություններ և զարգացած կուսակցական համակարգ ստեղծելու համար: